Հետաքրքիր է իմանալ

Զվարթնոցի տաճարի մոտ քարակոթողի վրա կա Ռուսա II-ի (685-645թթ. Ն.Ք) սեպագիր արձանագրությունը, որը պատմում է Հրազդան գետից դեպի Էջմիածնի դաշտ կառուցված ջրանցքի շինարարության մասին: Արձանագրության մեջ նշվում է՝ «այդտեղ հողը բարեբեր չէր, ոչ մի բան չէր աճում», իսկ ջրանցքի կառուցումից հետո Ռուսա II-ը հիմնել է խաղողի այգիներ, անտառ, ցորենի դաշտեր, և հիմնադրել բնակատեղի: Երևանի մերձակա Կարմիր բլուրի դիմաց այս ջրանցքի մի հատվածը անցնում է կես կիլոմետրանոց թունելի միջով: Ջրանցքը և թունելը պահպանվել են մինչ այսօր: